# Փոքր դեպքեր մեծ մարդկանց կյանքից

## ՀՈՒՍԱԼԻՈՐԵՆ ՊԱՀԵՑ

Դանիացի հայտնի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակի լաուրեատ Նիլս Բորը հարկադրված էր փրկվելու հիտլերյան օկուպանտներից և 1943 թվականին թողել Կոպենհագենը։ Նա սիրտ չարեց իր հետ վերցնել Նոբելյան ոսկե մեդալը, այդ մասիվ մետաղյա շրջանը, և լուծեց այն արքայական ջրում, իսկ լուծույթով շիշը պահեց իր լաբորատորիայում։ Պատերազմից հետո վերադառնալով տուն, նա քիմիական ճանապարհով ոսկին անջատեց լուծույթից և նրանից պատվիրեց նորից պատրաստել մեդալ։

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՆԳԻՍՏԸ

Մի անգամ Էդիսոնի կինն ամուսնուն ասաց, որ նրան հարկավոր է մեկնել որևէ տեղ հանգստանալու։

— Իսկ ո՞ւր,— հարցրեց Էդիսոնը։

— Ինքդ ընտրիր, ուր քեզ համար ավելի հաճելի է։

— Ես արդեն ընտրեցի,— ասաց նա։ Վաղը ևեթ կմեկնեմ։ Հաջորդ առավոտյան կինը նրան գտավ լաբորատորիայում։

## ՊԱՐՈՆ ԷՐԼԻԽԻՆ

Լինելով ցրված մարդ, Էրլիխն ամեն օր առանձին թերթիկների վրա կարգադրություններ էր գրում իր ասիստենտներին և աշխատակիցներին։ Կարևոր հանձնարարությունների կամ դասերի մասին չմոռանալու համար նա նույնպիսի թերթիկներ էր գրում նաև իր համար։ Սակայն վախենալով, որ կարող է մոռանալ այդ թերթիկները, Էրլիխը դրանք փոստով ուղարկում էր ինքն իրեն։

## ԻՆՔԴ ՔՈ ՏԱՆԸ ՎԱՐՊԵՏ

Պարկետե հատակը տան հայելին է։ Բայց ինչքա՞ն հոգս է պատճառում այդ հայելին։ Մինչդեռ հատակը կարելի է փայլեցնել այնպես, որ այն պահպանվի երկու տարի։ Դրա համար անհրաժեշտ է հատակը նախ հղկատաշել և լավ լվանալ, ապա, չորանալուց հետո երեք անգամ պատել լաքով։ Այդ նպատակի համար պիտանի են ինչպես սինթետիկ «ՄՉ—22» և «ՄՉ—26» լաքերը այնպես էլ փայտաղյուսե կահույքի լաքը, որին անհրաժեշտ է ավելացնել ամրացնող («ՌԲՌԻ»)։ Հատակի մեկ քառակուսի մետրը լաքով պատելու համար անհրաժեշտ է 150 գրամ լաք։

Եթե փայտե թանկարժեք առարկայի մակերեսին առաջանում են խորդուբորդություններ կամ ճեղքեր, որոնք չեն աղավաղում բնափայտի նախշերը, ապա այն հնարավոր է վերացնել հետևյալ ձևով։ Նույն տեսակի փայտից պատրաստեցեք ալյուր (փականագործական խոշոր ադոցով մի կտոր փայտ ադոցեք)։ Թեփը լցրեք ապակյա անոթի մեջ ու վրան ավելացրեք «Ռապիդ» սոսինձ և խառնեք այնքան, մինչև ստացվի խմորանման մասսա։ Վնասված մասերը սոսնձեցեք և պտուտակիչի նման սրված ծայր ունեցող փայտով այդ խմորանման մասսան քսեք նրանց վրա։ Ապա ստվարաթղթի վրա դրեք փայտե կամ մետաղե հաստ թիթեղիկ և այն ուժով սեղմեք վերանորոգված մասին։ Չորանալուց հետո մաքրեք սոսնձված մասը։ «Ռապիդ» սոսինձը մուգ բծեր չի թողնում։ Խոշոր վնասվածքների դեպքում այդ գործողությունը կրկնեցեք մի քանի անգամ։ Բնափայտի նախշերն այս դեպքում խախտվում են, և արհեստական ծածկույթը բնականից փոքր-ինչ մուգ է ստացվում։ Ոչի՛նչ։ Դա էական նշանակություն չունի։ Դրանից խուսափելու համար կարելի է օգտագործել սովորական փականագործական «ԲՖ—2» սոսինձ։ Բնափայտե ալյուրի փոխարեն կարելի է օգտագործել ցանկացած տեսակի փայտի մանր թեփը։



digitised by A.R.A.R.@